

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopédie معجم علوم

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ՏՆՕՐԷՆ

Ղ. ԲՈՂԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

1898 ՍԵՊՏԵՄԲԵՐ 12

Ամեն շաբաթ համար Տարեկան կանխիկ 50 դահեկան, Վեցամսեայ 26 իսկ եռամսեայ, 13 դահեկան : Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ : Թղթատարի ծախքը հաճախորդից կը վերաբերի : Հասր 40 փարայ : Գաւառներէ բօսքի բոլ ալ կ'ընդունուի 100 դրուցի տեղ 105 դրուց :

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԽԱՆՃԵԱՆ — Առողջապահութեան պէտքը մեր վարժարաններուն մէջ :
Գ. ՏԵՎԷՃԵԱՆ — Մանուկագործութիւնը Արաբկերի մէջ :
Ղ. ԲՈՂԱՏ — Գետնախնձորի մշակութիւնը :
ՄԻՀՐ — Որովայնախօսութիւնը կամ Որովայնախօս ըլլալու գործնական միջոցներ :
Ղ. ԲՈՂԱՏ — Շերամաբուծութիւն. — Մակարուծային հիւանդութիւններ :
ՏԱՆՏԻԿԻՆԸ. — Խոհանոցի բաժին. — Սմբուկի խճողակ, եւայլն, եւայլն :
Տ. ՊՕՉԱՃԵԱՆ — Գիտական Խնդիրներ :
Ազգային, Ներքին եւ Քաղաքական Լուսքեր :
Թղթակցութիւնք, Հանելուկ, Ազդեւն :

Հատը 40 փարայ

ՏՊԱԳՐ. ԳՐԻԳՈՐ Պ. ԶԱՅՍԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պոստ - Այլի շտապէս, Թիւ 4

ՋՐՕՍԱՆՔ

ՀԱՆՅԵԼՈՒՆ ԹԻՒ 19

«Ածական» է վանկըս առաջին,
Յաճախ երեւի՜ր աչացդ առջին.
Մերթ ընկերներու խմբով մնորուն,
Պար կ'առնունք դէս դէն շրջան ոլորուն.
Թէ երկրորդ վանկըս արմատ մ'է բայի,
Գեղջուկ տարը միշտ ատոր կը նայի.
Ատով նա կարէ արդիւնք ձեռք բերել,
Երբ ունի սակայն գեղջուկն այդ հէք,
Կովեր ու այծեր և ոչխարներ էգ:

Կցէ իրարու,

վանկերըս երկու

Առաջին վանկիս արդիւնքն կ'ըլլամ,
Ու քեզի քաղցրիկ համեղ կեր կ'ըլլամ.
Ըսեմ քեզ նաեւ՝ թէեւ ես իր եմ,
Անշունչ անկենդան՝ սակայն կը նիրհեմ.
Ոսկւոյ արծաթի խառնուրդ մը համակ,
Ճերմակ չապիկ մը հագած՝ իմ քամակ,
Երբ տաքնայ մարմինս, գլուխս ջնոնու,
Երկու վանկս մէկ կեանք հոգի կ'առնու.
Ըսէ՛ ընթերցող հիմա շուտ տեսնեմ
Ի՞նչ հրաշալի և հաճոյ իր եմ:

ԳԵՂԱՄ Կ. ՌԻՆՃԵԱՆ

ԼՈՒՆՈՒՄՆ ԹԻՒ 20ՐԵՔՏԱՍԱՆ ՀԱՆՅԵԼՈՒՆԻ

Աքանջելի ես դու քու տեսքովդ հրաշագեղ
լուսին,

Ուստի վայել է որ մարդիկ վրադ յարգանքով
խօսին:

Գիտեմ որ շունիս հագուստ ու կապուստ,
հանդերձ կամ մուշտակ,

Այլ մերթ ծածկուիս, թագջիւ ընդ երկար
թանձր ամպոյ տակ:

Ես չեմ սրահուլոր, կրնաս դիմ գիտել ո՛ւր
որ ալ ըլլաս,

Գո՛ւ վե՛հ թագուհի, մութին լոյս արուել դո՛ւ
միայն կրնաս

Ինչո՞ւ սակայն վիշտ, է՛ր ունայն ողբեր ու
սիրտ մաշող ցաւ,

Քանի որ արդէն կուրծքիդ մէջ այդ հուրն
երկնից արուեցաւ:

Ի՞նչ հարկ երկարել, բաժնե՛ք վանկերդ,
շուտ եթէ կ'ուզես.

Մեծ սխալ մ'է որ առաջին վանկիդ (ճճի մ'է)
կ'ըսես:


Այն մարդ կ'ատէ իրօք, բայց գիտէ թէ մի-
ջատ մ'է «լու»ն,

Որ յաճախ մի սուր ցաւ կը պատճառէ զմեզ
խայթելուն:


«Սին» վերջի վանկդ է մի ածական անհա-
ճոյ իրաւ

Զոր կուտանք միայն այն բաներուն ոյց կը
յարմարի լաւ:

ՊԷ. Պ. Պ.



Լուծած են նաեւ, Մայր վարժարա-
նի աշակերտներէն Պ. Միքայէլ, Յ. Գա-
րակէօղեան ոտանաւորով. իսկ Պարոնայք
Յակոբ, Արայճեան, Յ. Շէլէֆեան, և
Գարթայէն Ե. Յ. Էթմէքճեան արձակ:



Թերթիս համակրող Պատ. Բաժա-
նորդներէն ոմանք նամակաւ կը հարցնեն
մեզ թէ, արդեօք իրենք ալ կրնա՞ն մաս-
նակցիլ հանելուկ և դիտական խնդիր-
ներ առաջարկելու, հաճութեամբ կ'ըն-
դունինք, երբ անոնք խնամով պատրաս-
տուած, մանաւանդ կարճ, կտիկ ոճով,
և միշտ ժողովրդական լեզուով գրուած
ըլլան:

Այս առթիւ՝ հանելուկները ոտանա-
ւորով լուծող բաժանորդներէն ալ կը
խնդրուի որ, կարելի եղածին չափ կարճ
գրեն, և զգուշանան երկարաբանութիւն-
ներէ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական և Գիտական

Encyclopaedia



ԽՄԲԱԳՐԱԳԵՏ - ՏՆՕՐԷՆ

Դ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 28

1898 ՍԵՊՏԵՄԲԵՐ 12

ԱՌՈՂՋԱՊԱՅՆՈՒԹԵԱՆ ՊԷՏՔԸ ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ճիշտ այն ժամանակափոխյին մէջ կը գտնուինք, յորում՝ ամալերջի հանդէսներէ և տարեկան արձակուրդէ վերջ՝ ամեն վարժարան իր նոր տարեշրջանը կը վերսկսի, բնականաբար աւելի նորանոր կազմակերպութիւններով և ճոխ ծրագիրներով. ուրեմն կրթական հաստատութեանց ներկայ տարուան վերաբացումն պատեհ առիթ համարելով, կը փութանք մատնանիշ ընել վարժարանաց մէջ աչքի զարնող կրթական պակաս մը, որ կենսական կարեւորութենէ և հանրային օգտակարութենէ զուրկ չէ:

Եթէ միամտաբար հաւատանք թէ ամեն դպրոց կազմական կանոնադրին շերմապէս կը հնազանդի և անոր ցոյց տուած ուղղութեան ճամբով կը քալէ, չարաչար սխալած կ'ըլլանք շիտակը, վասն զի ճշմարտութեան գէժ մեղանշած չեմք ըլլար եթէ ըսենք թէ յիշեալ կանոնա-

դիրը՝ որ ազգային նախնական կրթութիւնն ուղղելու, կանոնաւորելու գովելի ու աղնիւ տրամադրութիւնն ունի, և սահմանուած է ամէն տարրական և բարձրագոյն նախակրթարաններու մէջ առ ի կիրառումն, իր ծնունդէն մինչև այսօր ճշգրտապէս ու կանոնաւորապէս դորձագրուելէ հեռի կը մնայ. հետեւաբար, մեր վարժարանաց կրթական ընթացքին՝ կազմական կանոնադրի ուղղաձիգ ճամբէն շեղած ըլլալուն բուն պատճառները սրտնել և քննադատութիւնն ընելու հոգն ձեռնհասներու թողլով, մենք կը շատանանք միայն վերոնշանակեալ պակասն ձեռք առնել:

Եթէ կազմական կանոնադրի ժ. և ժ.Գ. յօդուածները ուշի ուշով աչքէ անցնենք, և կամ լաւ եւս է ըսել՝ մանրագէտով զննենք, ամենայն դիւրութեամբ պիտի նշմարենք վարժարանաց մէջ աւանդուելիք ուսմանց և դիտութեանց շարքին մէջ ամենակարեւոր դաս մը՝ առողջապահութիւնը՝ որ չենք դիտեր ինչո՞ւ կազմական

կանոնադրին մէկ մութ անկիւնը ան-
ձայն, անշշուկ փակուած մնալու դա-
տապարտուած է միայն, ու վարժարա-
նաց հոյակապ դռնէն ներս մտնելու մեծ
ու արտակարգ պատուոյն ոչ երբէք ար-
ժանացած, իբր թէ անպէտ ըլլար տն :
Այսու հանգերձ թերեւս դտնուին վար-
ժարաններ, ուր տոյն կենտական գիտու-
թեան գոյութեան հետքերը նշմարուին,
ուկայն պարզապէս բացառութիւն կը
համարուին անոնք. և կրնանք ըսել թէ
մատի վրայ համրուելու չափ նուազ թիւ
մը կը կազմեն : Ուրեմն ի տես այս կըր-
թական զեղծման, մեզ կը մնայ միայն ա-
ռողջապահութեան կարեւորութիւնը բա-
յատրել, հոտարակութեան՝ նամանա-
ւանդ մեր կրթական վարիչներուն ներ-
հող մարերն արթնցնելու և գէպի պի-
տանին մըսմ և զրգիւ տալու համար :
Այս առթիւ ո՛չ խել մը ուռուցիկ և ան-
շմուշկ օրինակներ արտաբերելու, և
ո՛չ ալ գիտական նուրբ ծանօթութիւն-
ներ պարզելու հարկը կը տեսնենք, կը
բաւէ միայն տկնարկ մը սփռել մեր շուրջն
և քիչ մը խմատուն շրջահայեցողու-
թեամբ գիտել, ակն յանդիման տեսնե-
լու համար շատ մը պարզ օրինակներ :

Յայտնի իրողութիւն մ'է թէ ընդհան-
րապէս տղայք անդիտակցաբար ինքզինք-
նին տեսակ տեսակ արտաբերն ազդեցու-
թեանց ենթարկելէ չեն զգուշանար, ո-
րովհետեւ անոնց փնտարեր ըլլալէն գի-
տակցութիւն չունին : Գիտէք թէ տղան
ի բնէ ժառանգած կարգ մը ունակու-
թիւններ ունի. օրինակի համար, չը սի-
րեր հանգարա կենալ ոչ տան մէջ, ոչ
վարժարանը և ոչ այլուր, միշտ կը խա-
ղայ, կը խայռայ, շագանակի որդի նման
կ'եռուզեռայ, ինչպէս կ'ըսեն մեր ծե-
րունազարդ մամիկները, բնական է թէ
կը քրտնի, և յետոյ մարմինը քրտնաթոր
վիճակի մէջ օդին ազդեցութեան տակ
կը դնէ, անզգալարար կը պազի, ու շատ
չը տեսնուի կը տեսնուի ո՛ր անկողնոյ մէջ
է : Խեղճ տղան եթէ առողջապահական

զգուշութեանց տեղեակ ըլլար, ակներեւ
է թէ չը պիտի մատնուէր այդ գոթաղդու-
թեան : Ահա մեր վարժարաններէն ա-
ռողջապահութեան բացակայութեան վը-
նասը :

Նոյնպէս տղան երբ խելահասութեան
կը թեւակոխէ, տոյն ատեն շատ մը յուր
և փճացուցիչ սովորութիւններու և մու-
լութիւններու աչքը կը բացուի՝ կը վար-
ժուի, որոնք բարոյականի կործանման,
վարուց և բարուց ապականման կ'ապառ-
նան, ու շատ անգամ մինչեւ մահուան
գերկը կ'առաջնորդեն զանի : Եթէ տղան
առողջապահական ծանօթութեանց գի-
տակից ըլլար, դիւրին է հետեւցնել թէ
պիտի զգուշանար այդ մահացու մուլ-
թիւններէն : Ահա մեր վարժարաններէն
առողջապահութեան պակասութեանը
չարիքը :

Աւելորդ է նաեւ յաւելուլ թէ չա-
փահասութեան և նոյն խոկ ծերութեան
տարիքին մէջ ալ զանազան անհամար մու-
լութիւններանրաժան ընկեր կ'ըլլան մար-
դուն, որուն՝ այս մուլութեանց երեսէն
բարոյական մակարդակը քայքայուելով
շատ մը թէ՛ ֆիզիքական և թէ՛ բարո-
յական անգառնալի կորուստներու կը
մատնուի : Նորէն պատճառը առողջապա-
հութեան պակասութիւնը : Եւ գեռ այս-
պիսի քանի՛ քանի՛ օրինակներ, որոնք մեր
առօրեայ կենցաղին մէջ միշտ կը հան-
դիպին մեր ամէն քայլափոխին, և կ'ըզ-
գացնեն մեզ կարեւորին փարելու պէտ-
քը, և մասնաւոր իրենք մեր թուլ ըն-
թացքը, սակայն մենք փոխարէն միշտ
անտարբեր միշտ անզգայ կը մնանք և
չենք ուզեր թօթափել մեր մէջ տիրա-
պետող արեւելեան թուլութիւնն ու ուր-
կարութիւնը, որոնք մեզ համար ժա-
ռանգական և կամ տարափոխիկ ախտ
մ'են դարձած կարծես :

Ներեցէք, Ազնիւ ընթերցողք, որ զձեզ
կատարելապէս համոզելու համար ձանձ-
րոյթ մը առաջարկեմ : Մտէ՛ք ազգային
կամ անհատական հայ վարժարանէ մը

ներս, ուր առողջապահութեան հոտը չը գգացուիր երբէք, հան պիտի տեսնէք մտրած աչեր, վտիտ ու աշնան տերեւներուն նման դալկադէմ պատանիներ^(*)։ Եթէ մէկ հատով չէք դահանար, մտէք տրիշ մ'ալ, ապահով եղիք թէ միեւնոյն խղճալի ապաւորութեան տակ պիտի հեռանաք անկից. պատճառը՝ նորէն առողջապահութեան պակասութիւնը չէ՞ միթէ։

Իսկ մաշք եւրոպական կրթական յարկէ մը ներս, հակապատկերը պիտի նըշմարէք մերիններուն, առողջ կազմուածք, վառվռուն աչեր, քաջող մարմին. ասոնք պիտի ըլլան աշակերտին վրայ ձեր առաջին ակնարկով տեսածները։ Ինչո՞ւ, որովհետեւ առողջապահութեան դասը անոնց վարժարաններուն մէջ հաստատապէս գոյութիւն ունի։ Հետեւապէս մեր և անոնց դեռահաս սերունդին մէջ տիրող այս զգալի տարբերութեան ի տես, պիտի ապշիք անշուշտ, և ձեր բարի նախանձը պիտի շարժի թերեւս, և այս առթիւ պատճառ մը չ'ունինք չը հաւատարմութէ մեր դպրոցներուն համար վիշտ ու արգահաստանք պիտի զգաք, օտարինին համար միշտ հիացում և զմայլանք աներկբայապէս։

(*) Հրանտ Առատուր «Արեւելք»ի յարգելի խմբագիրը, համանուն թերթին մէջ Պրուսայի վարժարաններուն կրթական վիճակին նկատմամբ իր տեսութիւններն պարզած ու գոհունակութիւններն յայտնած պահուն, չէր վրացած նաեւ աշակերտաց նիհար կազմուածքէն ու տոգոյն դէմքերէն զգացած յուզիչ տպաւորութիւնն ու ցաւը արտայայտել. (ահա մեզի կենդանի վիտայ մը և պահանջած էր որ մարմնամարզը պարտաւորիչ դառնայ առհասարակ ամէն վարժարաններու մէջ։ Միեւնոյն բանը մենք ալ առիթ ունեցանք պատուիրելու անցելոյն մէջ, և փութացինք միջոց ալ գիտական ծանօթութիւններ հաղորդել, անոր բնախօսական գովելի յատկութիւններն ու կենսատու ծառայութիւններն ծանօթացնել, սակայն չենք գիտեր թէ քանի՞ հոգիի ականջը մտաւ։

Ներուի մեզ դիտել տալ նաեւ սա պարագային մէջ թէ մենք՝ օտարամեկներս՝ որ մեր ամէն արարքներով, մեր ամէն առերեւոյթ ձեւերով, մեր ամէն վարմունքով, մեր ամէն շարժումաժքով, վերջապէս քաղաքավարական ամէն ձեւակերպութիւններով ալ կ'ուզենք նմանիլ օտարին, միշտ անոնց ուղարկութիւններն ընդօրինակելու վերին ձգտում մը կ'արտայայտենք, անոնց բարքերն իւրացնելու անյադ տենչ մը և անզուսպ փափաք մը կ'զգանք միշտ, առանց զոնազանելու յոռին ու բարին, կը սիրենք անոնց վարժարանները, ու այս սէրէն մշտաւ մեր զաւակաց օտար կըրթութիւն ու գաւառիարակութիւն տալու հետամուտ ենք միշտ, իբր թէ օտարին կաթովը դիեցուած ըլլայինք. հապա ինչո՞ւ ուրեմն օտարին ամէն կրթական ընթացքին ալ չենք հետեւիր, — զոնէ կարեւորներուն, Օտարները իրենց ամէն կարգի կրթական հաստատութեանց մէջ առողջապահութիւնը հիւրասէր տանտիկնոջ մը նման հիւրընկալած ու մեծարած են զայն։ Եւ որովհետեւ օտարներուն ամէն օրինակին միշտ հետապնդելու մտրմաջն ունինք, ինչո՞ւ ուրեմն չենք ուզեր անոնց սա արդիւնալից օրինակէն ալ օգտուիլ։ Ի՞նչ պատճառ ունինք չ'աւանդելու առողջապահութիւնը աշակերտաց՝ մեր վարժարաններուն մէջ, այն բարձր գիտութիւնը որ կը սորվեցնէ առողջութեան պահպանման եղանակը, հակառողջական պայմաններէ զգուշանալու ողջպահիկ միջոցները, և առողջապահական օրինաց և կանոնաց դէմ գործուած վարմունքներէ և անհնազանդութիւններէ հեռի կենսալու կերպը։

Արդարեւ ճշմարտութիւն է ըսել թէ՛ առողջապահութիւնը գրեթէ մէկ քանի տասնեակ տարիներէ ի վեր մանաւանդ առաջնակարգ և ամենապարեւոր գիտութեանց կարգը դառուած է, միանգամայն ճանչցուելով անոր օգտակար և փրկարար ծառայութիւններն ալ։ Այս առթիւ

կարծէ նաեւ մէջ բերել թէ ամէն քաղաքակիրթ ազգ և աէրութիւն իրաւամբ առողջապահութեան կարեւորութիւնն զգալով, դիտութեան ծաւալման և յառաջդիմութեան արնող, աշխատող՝ առողջապահական համաժողովներ կազմակերպած են: Սոյնպէս աստ անդ առողջապահական քննիչներ կարգուած են, որոնց պաշտօնն ու պարտականութիւնն է հանրային առողջութեան հսկել. ո՛չ ապաքէն այս կազմակերպութիւնները առողջապահութեան կարեւորութիւնը հռչակող կենդանի ապացոյցներ են:

Ներուի մեղ ուրեմն հարցնել թէ՛ ինչո՞ւ մեր կրթական վարիչները այսքան կարեւոր դաս մը բարձի թողի ըրած ու հարկեցուցիչ չեն ըրած: Թէ ի՞նչ բան կ'արգիլէ զիրենք: Բարի կամեցողութեան սղթն է որ կը պակսի արդեօք: Մենք կը փորձուինք բսելու թէ ապահովաբար դիտական ճաշակի երաշտութիւնն կամ պակասութիւնն է որ կը մղէ զիրենք ապակին կոյր աչքով դիտել զայն: Այսու հանդերձ կը խոստովանինք նաեւ թէ մեր կրթական մշակները միշտ հետամուտ են իրենց խնամոց յանձնուած զաւակներուն մտաւորական ուժը զարգացնելու. սակայն հարկ է դիմնալ որ խնացական զօրութեան զարգացումը, մտաւորական կարողութեան ծաղկումը՝ ֆիզիքական աճեցման հետ սերտ առնչութիւն և յարաբերութիւն ունին: Ուստի նախ մեր ազոց մարմնական առողջութիւնը ապահովենք, յետոյ մտաւորական կարողութիւնն զարգացնել, մշակել զոնք:

Հետեւաբար, ալ մէկգի վանենք մեր ժառանգական թուլութիւնն, ու արթննանք և ճանչնանք առողջապահութեան կարեւորութիւնը: Ծանօթացնենք մեր զտական առողջութեան յարգն ու արժէքը, և հասկցնենք թէ առողջութիւնը որպիսի դերադոյն ու ցանկալի երջանկութիւն է, և անդին ու անստղիւտ հարստութիւն, ու զայն խնամքով հսկելու ու մշնջնհապէս անեղծ պահելու

եղանակը սորվեցնելու համար ջանադիր ըլլանք ներմուծել առողջապահութիւնը մեր ուսման և դիտութեան գանձարաններէն ներս, ու մեր ազոց մարքերն անոր փրկաւէտ օրինաց հետ հաշտեցնենք, անոր օգտակար կանոններով բեռնաւորենք և ցանենք անոնց մէջ առողջապահութեան արդիւնաբեր սերմերն:

Չէ, անհոգ վարմունքով չը թողունք որ մեր զաւակները առանց առողջապահութեան դպրոցական մթնոլորտին տակ՝ արեւուն տօթակէզ ճառագայթներուն հանգէպ գտնուող վարդի թերթի նման՝ թառամին ու թարշամին, և ապառողջ ու աւշային սերունդ մը կազմեն:

Այժմ, կարճ խօսքով կը պահանջենք մեր կրթական մարմիններէն որ առողջապահութիւնը պարտաւորիչ դարձնեն մեր վարժարաններուն մէջ ալ, որով կարելի ըլլայ պատրաստել կայտառ ու քաղարի սերունդներ:

Ա. ԽԱՆՃԵԱՆ

ՄԱՆՈՒՍԱՅԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

ԱՐԱՔԿԻՐԻ ՄԷՋ

(Շարունակելու է ԲԷ 26)

Արհեստը աւելի զարգացած կ'ըլլոր եթէ երկրին նիւթական պայմանները քիչ մը ձեռնառու գտնուէին, և ըլլային դրամատէրներ՝ որոնք քաջալերէին արհեստը և իրենք ալ օգտուէին Բրդեղէնի տարազադարձութեան «ֆասօնի, դալմիլի» փորձերն՝ որ կրնային յաջող արդիւնք տալ, ու նոյն իսկ միջիլ եւրոպական սոցնանման տարազներու հետ, որ միայն անոնց աժնութեան չեն դիմացած, բայց այս անպատահութիւնն ալ դրամազլիի չգոյութեան վերադարձի է:

Մենք հոս կ'ազնենք նախնական դպրոցաւոր մը տալ մանկտա գործելու վրայ շատ համառօտ, ըսկ արհեստական դործածուած բառերը ծանօթացնելու համար

«Հանրագիտակի» : — Նախ ըսենք թե մանկիսա շինուելը երկու գլխաւոր շրջան ունի . — մանածը հէնք հինեւ և ապա հէնքը մանուսա գործել : Երեք ծրար մանածը՝ միջին հաշուով հէնք մը կ'ըլլայ (մէկ ծրարը 4 քիլոկրամ ծանրութիւն ունի) և մէկ հէնքը 30 թօփ մանիսա : Նախ և առաջ ծրարները ներկարարներուն կը զրկեն հարկաւոր գոյներով ներկելու համար (որուն վրայ յաջորդ անգամ), ապա «խաշիլ»ին մէջ (ալիւրով ու ջրով եփուած խիւս) կը թաթխեն ու կը ճմրութեն, որուն «չոյ» տալ կ'ըսեն և որ մանածը կը փայտացնէ . ու կը սփռեն «ճէրէկ»ներու վրայ . չորնալէ վերջ կը զրկեն առէջը լեցնողներուն՝ (միշտ կին) որոնք մանածը թրջելով «նէղիւք»ի (ճախրակ) վրայ կանցնեն մանածի կապերը ու ջայրով կը փաթթեն փայտէ խոշոր դարդակներու վրայ . այս լեցուն դարդակներ կը հաւաքուին հէնք հենողին քովը, որ՝ իրենց գոյնին ու պէտք եղած տեսակին համաձայն՝ կը շարէ փայտէ շրջանակի մը մէջ անցած երկաթ թելերու վրայ՝ որոց վրայէն թել մը քաշուելով դարդակը դիւրութեամբ կը դառնայ ու կը քակուի . այս (խարշուլուխ) հաստատուած կ'ըլլայ հէնքին տօլապին դիմացը, մէն մի դարդակի թել երկաթ գործիքի մը ծակերէն, որպէս զի թելերը իրար չի փաթթուին ու կտրեն, այս ծակտակէն գործիքը (էլուճէկ) միշտ ձախ ձեռքը բռնած կ'ըլլայ ու աջով կը դարձնէ հէնքին տօլապը (բանի մը ձողուններով կըր դաշնածեւ մը) որուն վրայ կը շարէ մանածի կծիկները փաթ փաթ մինչեւ որ հէնքը լմնայ : Մէկը մինչեւ իրիկուն երեք հէնք կրնայ հենել : Մանածը տօլապի վրայ չորնալէ վերջ կը քակեն և իրարու վրայ կը փաթթեն խոշոր դղումի մը պէս : Յետոյ գիմացէ դիմաց երկու հոգի հէնքը վրայ կը քաշեն, այսինքն բոլոր թելերու ծայրերը մէկիկ մէկիկ կ'անցնեն «աղբէն», աղբը երկու հորիզոնական գաւաղաններու վրայ հաւաքելէ (թիւրէ)

հիւսուած ցանց մ'է . և ապա «սանառ»էն . տսիկա ալ տեսակ մը եղէգի բարակ ճեղումներով իրաքու խիա խիա տգուցուած են երկու հորիզոնական գաւաղաններու մէջտեղ : Ահա սակէ վերջն է որ հէնքը կը քաշեն հորուն վրայ գործուելու համար : Հորը՝ հա՞րկ կայ նկարագրել, փայտէ սարուած մըն է գետնին ու առիւթին միջեւ փայտէ գերաններով հաստատուած : «Պալմին»ը, կարճ կեկ գերան մը, որ ինքիւ վրայ դարձուելով գործուած մանուսան վրան կը փաթթէ : «Տուֆան» հորուն այն չարժական մասն է, որուն մէջ ագուցուած կ'ըլլայ սանարը՝ աղբին առջեւ՝ և որ ամէն անգամ մագոգը թել մը աւելցնելուն կուգայ զոնեւ հաստատուել հոն : Մագոգին (=կկոց) մէջը անցուած կ'ըլլայ պղտիկ մանուսարան՝ մանածով աւաղացած՝ որ ամէն երթալ գալուն կը քակուի : «Մթիթ»ը հորիզոնական միջատ փայտ մըն է՝ երկու ծայրը երկաթի սուր աւաղանիկներով՝ որ մանուսային նոր գործուած տեղը կը զարնուի անոր լայնքը չի կռնչմտելու համար : «Մոմիատ»ը հորուն կախուած մոմազօծ փայտն է, որով թելերը կ'ողորկեն : Ծնճղուկները (մանրիկ ճախրակ) վերէն՝ և սանփայտը վարէն՝ սաքին ճնշելովը՝ աղբը վեր վար կը քաշեն որով կը բացուի գործուած մագոգին անցուղարձին համար : Կան նաեւ «մաղապար» եւայլ երկրորդական մասեր :

* * — Պատայնանկ մը օրական 1—4 թօփ մանիսա կրնայ գործել (թօփը 8—11 արշըն, որ կ'արժէ 7—17 զրուշ) և օրական վարձը կ'ստանայ 2—10 զրուշ : Ծօխ մանիսադ որմ մը տարին 15—20000 թօփ մանիսա կրնայ արտադրել, և շահիլ 150—200 ոսկի, և այս տեսակ մանիսագործի մը երեսէն կ'ապրին 40 ընտանիք՝ օգնական, ներկող, հոր գործող, ուղբող, առէջը լցող, եւայլն : Տարեկան միջին հաշուով Արարկիր կրնայ արտադրել 400000 թօփ մանիսա, որ կ'արժէ հա-

մեծատարար 40000 ոսկի. այս գումարին կէսը, որ Եւրոպական հրատարակները կը քաշեն տանին իրենց մանածի արտածութեամբ (Մարտէյլ, Մանչէսթըր և այլն), մնացեալ կէսը Արտրիկի մանի-սողործներու կը բաժնուի, որ եթէ տարին մարդ զլուխ 7 ոսկի ծախք հաշուենք, 20000 ոսկիի շահով կ'ապրին 3000 մօտ անձ: Արտադրուած 400000 թօի մանիտային հաղիւ ¹/₈ը կը գործածէ Արար-կերցին իր պէտքերուն մնացեալ ⁷/₈ը, այսինքն 35000 ոսկիի մանիտա կ'արտա-ծէ մօտակայ քաղաքները, Խարբերդ, Էրզրում, Մալաթիա, Տիվրիկ, Ակն, և այլն:

Ար-Բեք

Գ. Տէվլէճեան

ԳԵՏՆ ԱԽՆՁՈՐԻ ՄՇԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակ. Գ. Բեք 27)

Մշակութան հարաբերական տեղը. — (Place dans la relation). — Գեանախնձոր իր չարագարուս յատկութիւնով, առանց անը պատահութեան, կրնայ չափ մը սուսկերով մշակութեան յաջորդել. մինչեւ իսկ միեւ-նոյն արախն մէջ ամէն տարի շարունակաբար կարելի է մշակել: Բայց որովհետեւ այս սուսկը խորունկ հերկուած հողերու մէջ աւելի աղէկ կը զարգանայ, և արտադրութիւնն ա շատ կ'ըլլայ, ուստի, ամէն անգամ որ մար-գագետին մը, խոսան երկիր մը մշակու-թեան ենթարկելու համար կը հերկուի, որու նախահերկը անշուշտ խորունկ կ'ըլլայ ընդ-հանրապէս, պէտք է յատկացնել միշտ առա-ջին տարին՝ գեանախնձորի մշակութեան:

Թէեւ հողմակարգի մէջ այս կամ այն սուսկին յաջորդելը կարեւորութիւն չունի. այնչափ գեանախնձորի համար, բաւ է որ հողը խորունկ հերկուած ըլլայ. բայց իրեն յա-ջորդող սուսկի որոշումը միշտ նկատողութեան առնել պէտք է: Գեանախնձոր մշակելու սահ-մանուած հողը խորունկ հերկուելուն, և շատ մ'անրուելուն պատճառաւ, աշնան և ձմեռան ցանքերու (ցորեն, գարի, վարսակ) չի յար-մարիր. որովհետեւ հողը հետզհետէ սմբելով,

այս սուսկերուն արմատները բաց օդին կը մնան, որոնք վնասուելով, սուսկերն ալ կը չորնան: Երկրորդ՝ գեանախնձորի բերքովը (cécotte, մահաուլ առնելը) շատ ուշ կատա-րուելուն ընդհանրապէս, վերոյիշեալ սուսկ-երը մշակելու համար, հողին պէտք եղած պատրաստութիւնը ժամանակին կարելի չէ տալ: Այս պատճառաւ, ընդհանրապէս գետ-նախնձորի մշակութիւնը պէտք է կատարել միշտ հողմակարգի սկիզբը. այսինքն՝ հողը մշակութեան դրուած առաջին տարին, որ անպատճառ խորունկ հերկել պէտք պիտի ըլլայ. և իրմէ վերջը մշակել, այսինքն՝ երկ-րորդ տարին՝ գարնանային «գեմետրեղ»-ն մը (céréale. ցորեն, վարսակ, գարի, հա-ճար, և այլն այսպէս կը կոչուին):

Մշակութան բերքը. — «Հողին պատ-րաստութիւնը». — Գեանախնձորի մշակու-թիւնը գոհացուցիչ կերպով յաջողելու հա-մար, ինչպէս վերը ըսինք, խորունկ հեր-կուած և ըստ կարելոյն փխրուն (փռիի պէս մանրուած) հող մը կը պահանջէ, ուր կարու-ղանայ իր բազմաթիւ երկար արմատները տարածել առանց արգելքի, և ելունդները խոչըրցնել: Եթէ հողը բնականէն խոնաւ է, խորունկ հերկուելով, իր թափանցիկութիւնը կ'աւելնայ, օդը ազատօրէն շրջան կ'ընէ իր պարապ միջոցներուն մէջ, և խոնաւութեան մէկ կարեւոր մասը շոգիանալով, տունկը նուազ կը տառապի: Իսկ ընդհակառակը, ե-թէ հողը բնութեամբ չոր է, խորունկ հեր-կուած ատեն, ձմեռն անձրեւներուն ընդար-ձակ տեղ մը տալով, երկար ատեն նպաս-տաւոր խոնաւութիւն մը կը պահէ իր ծոցը, և սուսկը իր արմատները գիւրութեամբ հո-ղին խորերը ընդարձակելով կ'աճի կը զար-գանայ:

Մ. տը կասպառէն տնուանի հողագէտը, Լիօնի մօտ Մ. տը Շանսէյի կողմէ այս մա-սին կատարուած փորձերը յիշելով իր երկա-սիրութեանց մէջ, խորունկ և ծանծաղ հեր-կուած հողերու արտադրութեան տարբերու-թիւնները հետեւեալ կերպով մատնանիչ կ'ը-նէ: Արտ մը երեքի բաժնած է:

Ա. 10 արտավար տարածութիւնով մէկ մասը 10 հար. մեթր (տարածութիւն, որ հա-ւասար է վերի վերոյ իջնա քիլի «աէրէ») խո-րութեամբ հերկելով, ստացած է 7252 ե-լունդ:

Բ. Միեւնոյն տարածութեամբ նոյն արտին երկրորդ մասը բաձով 20 հար. մեթր (մէկ թիղէն «գարը» քիչ մը պակաս) խորունկ հերկելով ստացած է 8689 քիւր եւրէնդ :

Գ. Միեւնոյն տարածութեամբ երրորդ մասը գութանով (խոշոր սալան) կամ սալարորով (փուլուք) 45 հար. մեթր խորունկ հերկելով ստացած է 10905 քիւր եւրէնդ :

Ուստի՝ ամէն անգամ որ հողը բնուարութեամբ խորունկ հերկուելու կը յարմարի, և գետնախնձորի մշակութեան պիտի սահմանուի, պէտք է ամենէն առաջ, և ըստ կարելոյն, 30—45 հար. մեթր խորութիւնով նախահերկ մը տալ միշտ ձմեռէն առաջ, աշնան մէջ. որպէս զի՝ տակի հողը որ երեսը պիտի ելլէ, երկարատեւ միջնորոտային երեւոյթներու ազդեցութեան ենթարկուելով, իր խափութիւնը կորսնցունէ և մշակութեան յարմարութիւնն ստանայ : Բնականէն կարծր հողերը պէտք է երկրորդ անգամ մը եւս հերկել 20—25 հար. մեթր խորութիւնով ձմեռն վերջը, կամ գարնան սկիզբները, երբ հողը տրամագրելի է. այսինքն՝ երբ կարելի ըլլայ արօր բանեցնել : Տնկարկումէն շարաթ մ'առաջ և կամ տնկարկման ժամանակ վերջին հերկ մը եւս տալու է : Թեթեւ հողերը ընդհանրապէս երկու հերկով պատրաստ կ'ըլան. մին՝ ինչպէս ըսինք՝ աշունին, իսկ երկրորդը տնկարկումի ստեն կատարելով :

Իւզանապի մէջ՝ ուր գետնախնձորի մշակութիւնը շատ յատուկ գացած է, հետեւեալ կերպով կը պատրաստեն արտերը :

Նախ կը հերկեն արտը խորունկ կերպով, յետոյ 2 մեթր լայնութեամբ ածուներու (թախթա) կը բաժեն, մէջտեղերնին 70—80 հար. մեթր լայնութեամբ ճամբաներ ձգելով : Հերկը կը կատարեն արօրով (գարա սափան), սալարօրով (փուլուք) կամ բաձով (պէլ), որ նոյն միջոցին, կամ անմիջապէս վերջը, արտին երեսը ելած հողի կոտորը (քեսէք) կը մանրեն, կը փշրեն, ցաքանով (Scarification), անիւներով տեսակ մը գործիք է, որ շատ մը ոտքեր կ'ունենայ ծայրերնին արօրի ձեւով փոքր երկաթներ անցուած : Այս ոտքերուն թիւն ալ ընդհանրապէս կ'ըլլայ 3—5—7—9 հատ). կամ մանկեղով (թրմըզ) եւս պիտի : Եթէ սահմանուելիք արտը մարգագետին մ'է, կամ խոպան տեղ մը, շատ ան-

գամ մինակ ածուներուն տեղը կ'որոշեն արօրով, առանց սակայն հողը ամբողջովին հերկելու : Այս երկու պարագային ալ, վերոյիշեալ նախնական գործողութիւններէն վերջը, միայն ածուներուն վրայ պէտք եղած քանակութեամբ սղր տարածելով, իրարմէ 30 հար. մեթր հեռաւորութիւնով գետնախնձորները աղբին վրայ կը շարեն. և յետոյ ածուներուն մէջտեղուանքը ձգուած ճամբաներուն հողը թեթեւ կերպով հերկելով, կը տարածեն գետնախնձորներուն վրայ. այնպէս որ, հապիւ 5—6 հար. մեթր բարձրութեամբ ծածկուին ասոնք՝ տարածուած հողին տակ : Եթէ նոր մարգագետին մ'է արտը, ճամբաները շատ ծանծաղ (երեսկուք) հերկելու է, որ քաղուած խարձը (gazon, չիմ) դիւրութեամբ փշրուի, բայց միշտ 5—6 հար. մեթր թանձրութեամբ ծածկելու է գետնախնձորները, և թողելու է այսպէս առանց քաղհանելու (վայրի խոտերը մաքրելու գործողութիւն) կամ բահելու (չտփալտփալ) :

Երբ գետնախնձորները բողբոջին և գետնէն 6—7 հար. մեթր վեր բարձրանան, չայն ատեն կրկին ճամբաները հերկելով, հողը կ'առնեն և նորածիլ բողբոջներուն վրայ կը տարածեն 3—4 հար. մեթր բարձրութեամբ : Այս գործողութիւնը 4—5 անգամ կը կրկնեն. ամէն անգամ որ գետնախնձորի ցողունները հողէն դուրս ելլեն : Գետնախնձոր մշակողները գիտեն թէ, առանց տունկերը թմբելու (butage, պողպղը լեցնել) լու հոսով չեն կրնար առնել. ահա այս գործողութիւններն ալ կատարելապէս թմբելու գործողութեան տեղը կը բռնեն գոհացուցիչ կերպով : Վերջին ծածկովը տրուելէն վերջը, որ այլ եւս ճամբաները խրամներու (հէնտէկ) փոխուած կ'ըլլան, բաձով եզերքները ուղղահայեաց դիրքով կը շտկեն, ինչպէս և խրամներուն յատակը, որոնցմէ ելած հողը կրկին կը տարածեն ածուներուն վրայ, և այսպէս կը թողուն : Բերքաղը որ քիչ ժամանակ յետոյ կը կատարուի, յայտնի կ'ըլլայ հողէն դուրս ելած ցողուններուն թաղաւեւէն և չորնալէն : Այս միջոցին երբ ելունդները հողէն դուրս հանուին, հողերը խրամներուն մէջ կը լեցուին կրկին. և հետագայ տարին կը վերսկսին միեւնոյն գործողութիւնները :

Թէեւ այս գրութիւնը դժուար կը նկա-

տուր, և այնպէս կը կարծուի թէ շատ աւելի կը կորսուի, բայց ամէն դրութեան աւելի առատ և ընտիր հասոյթ կ'արտադրէ, մանաւանդ շատ խոնաւ հողերու մէջ, որ կերպով մը արտը ուրդուած կըլլայ (drainer, արտի մը աւելորդ ջուրերը վազցնելու համար խրամներ բանալու գործողութիւնը): Մասնաւորապէս այն երկիրներուն մէջ ուր գործաւորներն շատ և աւուրջէքները աժան են, գետնախնձորի մշակութեան համար այս դրութիւնը ջերմիւ կը յանձնարարուի, որ եթէ աղէկ կատարուի, հասոյթը կրկնապատիկ կ'ըլլայ միւս գրութիւններուն բազմաութեամբ:

Ղ. ԲՈՒՍ

(Հրահանգներ)

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

ԿԱՄ

ՈՐՈՎԱՅՆԱԽՕՍ ԸՆԴԱՆՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.

Ա.

(Հրահանգներ 27)

Պիտի կրնայինք այս տեսակ մանրամասնութիւններ չտալ թէ՛ հին ժամանակի և թէ՛ մեր օրերու որովայնախօսներուն համար. վերջինները իբր ձախորդ ամբաստանուելու վտանգին մէջ չեն գտնուիր և անվտանգ կրնան շնորհել կարի շահեկան և միշտ պտտագին ծախսահարուած ունկնդրութիւններ կամ սրահի մը մէջ և կամ տեսարանի մը վրայ:

Որովայնախօսութիւնը, իր ստուգաբանութեան նայելով, փորէն խօսելու արուեստը պիտի ըլլար. շատ սխալ է մեր ներքին գործարանները աճեալ չեն ներքին և սակայն ուրիշ միջոցներ կ'ընձեռեն բան մը հասկըցնելու համար մեզի:

Որովայնախօսը ամէն մարդոց պէս կը խօսի, բայց կ'ընդունի ձայնաւորութեան մասնաւոր եղանակ մը՝ որ իր շրթունքներուն և իր լեզուին դիրքին հետեւանքը ձայնեցունելու այնպիսի սլորակներ, որ կը կարծուի թէ ուրիշ անձի մը կողմէն և կամ թէ քիչ հեռու տեղէ մը կ'արձակուին:

Այսպէս շինուած պատրանքը ա՛լ աւելի զիւրին եղած է ա՛յն դժուարութեան պատճառով, զոր կ'զգանք ձայնին ուսկից զայն:

Ճիշտ տեղը հաստատած ատեննիս, մանաւանդ երբ աչքը կամ ուրիշ նշան մը այդ գաղտնիքը մեզի ճանչցնելու համար օգնութեան չի հասնիր:

Մեր առջեւ տղայ մը և ծերունի մը ունինք, հիմա երբ լսենք մանկական ձայն մը, առանց վարանելու զայն պիտի վերագրենք տղուն, թէեւ երկուքին ալ շրթունքը չեն շարժիր: Եթէ մանուկին շրթունքը կատարեն այն շարժումները որ կը բնորոշեն խօսքը, մեր համոզումը աւելի եւս զօրաւոր պիտի ըլլայ, և չպիտի երեւակայենք թէ մանկական շեշտով յօգտուորուած ձայնները կրնան դուրս ելլել ծերունիին բերնէն, որուն մկունքներն ու զէմքը անշարժ են:

Աչքը կ'օգնէ պէտք եղած պատրանքը աւելցնելու. որովայնախօսն ալ զայն կ'աւելցնէ նախապատրաստական միջոցներով. այն ատեն երբ խօսիլ կուտայ ձեռքը բռնած կամ քովը նստած պաճուճապատանքին, անշուշտ պատրաստուած պարբերութիւններով մեզի կ'իմացնէ թէ պիտի ընէ խօսակցութիւն մը այդ առարկային հետ, և թէ սա անոր պատասխանն պիտի տայ:

Եթէ պիտի հարցապնդէ տան երգիքին վրայ դրուած դրան մը ետեւ անտեսանելի մէկը, դիտաւորութիւնը մեզի կը հասկնայ, ո՛րեւէ ձայն լսելէ առաջ, արդէն պատրաստած ենք զայն խմանալ ուղղած ուղղութեամբ: Երբ որովայնախօսը կատարելապէս իր արուեստին տէրն է, կրնայ պարագաներու համեմատ վանց ընել այս նախապատրաստական միջոցները, բայց թէ որ վանդը գործածէ, աւելի կը յաջողի: Որովայնախօսը իրապէս չիրենար «տանիլ» կամ «ձգել» իր ձայնը ո՛րեւէ տեղ մը, և կամ ուրիշ անձի մը, անառունի մը կամ անշունչ առարկայի մը բերնէն դուրս հանել զայն, իր տաղանդը կը կայանայ ձայնի աստիճանները փոփոխելուն մէջ այնպիսի եղանակով՝ որ մենք խի կը խաբուինք:

1. Հնձիւն. — խալտ, մեղմ, հաստ, կոկորդային, ռնգային, սուր, եւայն:

2. Ուժգնութիւն. — Ուժգին, տկար, մարմող:

3. ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ. — Բարձր, ցած: Ամէն մարդ իրեն սովորական յատուկ ձայն մ'ունի, բայց կրնայ փոփոխել կամ անոր ուժգնութիւնը. կամ բարձրութիւնը և կամ

հնչիւնը. հոս բնագիտութեան վրայ ճառել չափաւ փորձենք բնաւ, պարզապէս պիտի յիշեցնենք թէ ուժգնութիւնը առաջ կուգայ թրթռացումներու տարածութենէն և թէ բարձրութիւնը առաջ կուգայ թրթռումներու թիւէն:

Որոշ հեռաւորութեան մը մէջէն փոխանցուած ձայն մը կը հասնի մեր ականջին շատ քիչ տարածուն թրթռացումներով, գրեթէ տկարացած է սննդ: Ուրեմն ձայնի ուժգնութիւնը նուազեցնելով պիտի նմանցնենք հեռաւոր ձայներ. աստիճանաբար աւելցնելով ստիպաւ առ տակաւ մեզի մօտեցող ձայն մը, իր հնչականութիւնը և իր բարձրութիւնը փոփոխելով, պիտի ստանանք, սուր և բարձր ըլլալուն համաձայն՝ պարուրի մը կամ սղու մը ձայնը, ցած և մաշած ըլլալուն համաձայն՝ ծերունիի մը ձայնը:

Աւելի պիտի չ'երկարենք, այս հապճեպ պատմութիւնը ցոյց կուտայ թէ որո՞նք են այն միջոցները զոր կը գործածէ որովայնախօսը երբ բառերու արձակման ատեն չըրթունքները անշարժ են, Ա. Ձայնի չ'փոփոխում ուժգնութեամբ՝ շատ կամ քիչ մօտեցող ձայներ նմանցնելու համար: Բ. Ձայնի փոփոխում հնչականութեամբ և բարձրութեամբ իրմէ տարբեր տարիք ունեցող անձերու ձայներ նմանցնելու համար:

Այս միջոցները ամենուն ձեռքն են. իրաւունքն է ինչ ինչ ձայներ շատ կամ քիչ դիւրութեամբ կը յարմարին պահանջուած փոփոխումներուն, բայց ամէն մարդ կրնայ որովայնախօս ըլլալ չարք մը վարժութիւններով և շատ կամ քիչ երկար սերտեւնելով:

Ուստի սխալ կարծիք մըն է երեւակայելը թէ որովայնախօսութիւնը բնածին ձիրք մըն է. ճշմարիտ է թէ զայն կիրարկող շատ մը մարդիկ այս սխալը կը ջանան աւելի տարածել քան հերքել, պարզապէս զիրենք բարձրացնելու կամ մրցակիցներէ խոյս տալու համար:

Մենք ժիւ, որուն մէկ դարէ աւելի առաջ սկսող համբաւը մինչեւ մեզ հասած է, ութ օր իսկ չ'աշխատելով իր տաղանդը վաստակած է:

Խել մը աստիճանական վարժութիւններէ ետք կրնանք որովայնախօս դառնալ, բայց զանոնք ուսումնասիրելէ առաջ, լաւ է ուշադիր ականարի մը սեւեռել խաղացող անձերու վրայ, որ այսպէս գիտեն զբօսցնել կամ հոգի

մէջ ձգել իրենց ունկնդիրները:

Եթէ դիտենք որովայնախօսներուն ըրածները, պիտի կրնանք երկու տարբեր սեռերու բաժնել անոնց վարժութիւնները:

Երբեմն հասարակութեան պաճուճապատանքներ կը ներկայացնեն և անոնց հետ խօսակցութեան կը մտնեն և կարծել կուտան թէ անոնցմէ արձակուած պատասխաններ կ'ընդունին, կամ լաւ եւս իրենց մօտ զըտնուած շուն մը, անասուն մը, անշունչ առարկայ մը կը խօսեցնեն:

Ուրիշ անգամներ աներեւոյթ, հեռաւոր մարդու մը հետ խօսակցութեան կը մտնեն կամ ձեզունէն, սրմադարանի մը ներսէն, գետնին տակէն ձայներ դուրս հանել կուտան:

Ոմանք այս մասնագիտութեանց մէկուն կը հետեւին, ուրիշներ երկուքն ալ կը կիրարկեն միեւնոյն անգամ: Ուրեմն երկու տեսակ որովայնախօսութիւն ունինք.

«Մերձակայ» որովայնախօսութիւնը՝ որ գործողին մօտ դրուած առարկաներու հետ խօսելուն մէջ կը կայանայ.

«Հեռաւոր» որովայնախօսութիւնը՝ որ ձայները հեռու անդերէ՛ եկածի պէս արձկուելուն մէջ կը կայանայ:

Ուրեմն առանձին պիտի ուսումնասիրենք՝ որովայնախօսութեան այս տարբեր երկու եղանակները սովորելու համար՝ գործելու ձեւն ու ընելիք վարժութիւնները:

Որովայնախօսութիւնը ձեռք բերելու կերպը նախ և առաջ կրնար դժուար և նուազ հոսկնալի երեւալ, բայց քիչ մը յարատեւութիւն պէտք է առաջին դժուարութիւնները բառնալու համար և պիտի զարմանանք յառաջդիմութեանց արագ ընթացքին վրայ: Սակայն այս արագութիւնը վտանգ մըն է, նոր սկսողը չ'մտնած շուտով կ'անցնի մէկ վարժութեանէ միւսը դեռ նախորդին ամբողջապէս չ'ախրացած, պէտք է զգուշանանք այսպէս ընելէ, թէ որ կ'ուզենք ձեռք բերել վերջնական կատարեալ արդիւնք մը, պէտք է ջանանք ստանալ նոր արդիւնք մը միայն այն ատեն երբ «չենք շնորհք» տէր ըլլանք առաջինին:

Յիշանաւոր և թէ օտար է՝ն հռչակաւոր որովայնախօսներէն առած ենք այս դառերը. մասնաւորապէս պիտի նշանակենք Պարոնայք Գանթօնի, Մագդիլ, ինչպէս նաեւ Բրօքլին սօր Պաութէն, որ բարեհաճեցան իրենց ա-

րուեալին. դադարեցնելը ժողովրդին պար-
գարանել. դարձեալ կ'ըսենք, սկիզբները քիչ
մը յարաաւելութիւն թոյլ պիտի տայ ամե-
նուն ստանալ ստղանդ մը՝ եթէ ոչ մեծ օ-
գուտ ունեցող գէթ չափ զրօնեցուցիչ:

(Հարւել-էլ)

ՄԻՆՐ

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

ԲԱՍԹԵՕՈՒԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆՈՎ

ՄԱԿԱՐՈՒԾԱՅԻՆ ՓՈԽԱՆՑԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ
ՆԵՐ

Պզպեղախ (Pébrine ք-ր- ք-ղա)

(Հարւել-էլ. ք-ր- ք-ղա - 2)

Ինչպէս ըսած էինք նախորդ թիւերուն
մէջ, 1835ին, Բասթիսէօս Պասի երկար ու-
սումնասիրութենէ մը վերջը, ճանչցած էր որ,
չերամի թմրախա (միւսքարտին-քերէճ հաս-
թալը) կոչուած հիւանդութիւնը մանրա-
գիտային սնկարոյսէ մը յառաջ կուգայ, վա-
րակելով միջատին յօրինուածները: Եւ այս
մանրագիտային արտադրութեան գոյութիւնը
ստուգած և հաստատած էր Օտուէն, երբ
1849ին, Կեռէն Մէնըվիլը այդ գաղտասերի
ուսումնասիրութիւնը ձեռք կ'առնէ, և ա-
ռաջին անգամ ըլլալով, երեսն կը հանէ ախ-
տածէա միջատներուն արեան մէջ ոգեւոր-
եալ «մարմնիկ»ներ (Corpuscule), և կ'են-
թադրէ թէ, անոնք գաղտասերին սիրու-
ները ըլլալու են և ունին կամածին չարմու-
ներ: Կեռէն Մէնըվիլը այս վերջի տեսու-
թիւնը չքնդռնուեցաւ, միայն ախտածէա
միջատներու արեան մէջ կենդանի մարմնիկ-
ներու գոյութեան մասին ունեցած կարծիքը
հաստատուեցաւ, ինչ որ արդէն Իտալացի
գիտնականներու կողմէ ալ ճանչցուած էր:
Մ. տը Ֆիլիբի 1850ին նոր տեսութեամբ մը
բոլորովին կը ջրէր Մ. Կեռէն Մէնըվիլի կար-
ծիքը:

1853ին, Մ. Լէյտիկ, առանց տեղեկու-
թիւն ունենալու, Կեռէն Մէնըվիլի և Ֆի-
լիբիի աշխատասիրութեանց վրայ, որդան
կարմիրներու՝ արեան մէջ մարմնիկներու գո-
յութիւնը հաստատեց, և 1857ին ալ, չերա-

մի արեան մէջ դռնուած մարմնիկներու նմա-
նութիւն ունալին հաստատեց: Յետոյ, այդ
մարմնիկները գտաւ նաեւ սարդի և խեչա-
փառներու արեան մէջ ալ:

Բայց չերամներու մէջ տիրող հիւանդու-
թեան (պզպեղախտը) և այս մարմնիկներու
միջեւ գտնուած առնչութիւնը, առաջին ան-
գամ ըլլալով, 1856ին Միլանցի Մ. Գունա-
լիս անուն գիտնականը գտաւ. որ՝ ինչպէս
և նոյն միջոցներուն, Պալարիանիի և Լէյտիկի
նման, այս մարմնիկներու գոյութիւնը հա-
տատեց նաեւ ուրիշ չափ մը թեփաթեւերու
(թիթեանի) եւայլն արեան մէջ: Բատուցի
Տը. Օլիմօ, 1857ին, չերամի հոնտերուն մէջ
այդ մարմնիկներու ներկայութիւնը գտաւ,
որու վրայ հիմնուելով, Մ. Վիթաուինի դրու-
թիւն մը հաստատեց, որով կարելի կ'ըլլար
փարակուած հոնտերը առողջներէն դատել.
և ճանչցաւ այն տառն թէ, մարմնիկներով
փարակուած հաւկիթներուն թիւը հետզհետեւ
կը չափնայ, որչափ անոնց բացուելու օրերը
մեծանան:

Մ. Օլիմօ առաջարկեց այն տառն, ման-
րագիտակով քննել ոչ միայն ճուռածութենէ
վերջ հաւկիթները, այլ և կծիծները, որու
հետեւութիւնը նպատաւոր եղաւ: Մ. Գուն-
թիւն 1864ին այս գրութեանց վրայ սուսմ-
նափրութիւններ կոտորելու ձեռնարկեց,
բայց սեւէ դոհաւոցիչ հետեւութիւն չի կըր-
ցաւ հանել: Այն տառն, 1865ին, մեծանուն
Բատիէօս, և չնորհիւ իւր բարձր գիտնակա-
նութեան, և մանաւանդ աննկուն յարատե-
ութեան և լուրջ աշխատասիրութեան, և
հակառակ բոլոր միւս գիտնականներու հա-
կառակախօսութեան և բանապայքարներուն,
ինչոյրը ձեռք առնելով, գործնական և կա-
տարեալ կերպով լուծելու պատիւն ունեցաւ:
Մինչեւ այն տառն, թէ և միւս գիտնական-
ները այդ մարմնիկներու ներկայութիւնը
հաստատեցին չերամի արեան մէջ, բայց ա-
նոնցմէ չատերը չի կրցան ճանչնալ թէ, պզ-
պեղախտի բուն իսկ պատճառը այդ մարմ-
նիկները պէտք են ըլլալ. մէկ քանիներ մի-
այն կոտորածոտ կարծիքներ ունէին, և այն
ալ, կրկին թրթուրներու վրայ երեւցած յառ-
կալու սեւ բիծերու արտադրութիւնը, այդ
մարմնիկներու չին վերագրեր:

Մ. Բատիէօս իւր կարծիքը հաստատելու
համար, առողջ թիթեաներու հոնտերէն նոր

ծնած թրթուրներ առաւ, և երկուքի բաժնեց. իւրաքանչիւր կէտը զատ զատ տեղեր դնելով սնուցանել սկսաւ: Պղպեղախտէ վարակեալ թրթուրներ իմ ճղմելով և ջուրի մէջ խառնելով, այս ջուրէն վրձինով քսեցին, զատուած թրթուրներէն մէկ մասին միայն արուած տերեւներուն վրայ. իսկ միւս կէտին տուին մաքուր տերեւներ: Այս կերպով, մարմնիկները թրթուրներուն ստամոքսը ներմուծեցան, և մէկ քանի օր վերջը, հիւանդութիւնը իր յատկորոշ նշաններով սկսաւ ծնունդ տանել նախ անոնց աղիքներուն մէջ, երբ տակաւին անոնց մարմնոցն արտաքին կողմէն ոչինչ կ'երեւէր: Հիւանդութիւնը սրտով: Առաջին խորխորայունքն անմիջապէս վերջը, այս մանրէները սկսան երեւիլ նաեւ միջատներուն միւս յօրինուածներուն մէջ ալ: Այն տուին թրթուրներուն մէջ անհաւասարութիւնը սկսաւ երեւան դալ, և սապէնիով (փէրթէֆոիզ) զիւրութեամբ կը տեսնուէր ախտորոշ սեւ բիծերը, որոնք քիչ քամանակուան մէջ ընդարձակուելով, ճիշդ պղպեղախտի երեւոյթները յառաջ բերին: Բոկէ և այդ մանրէները (մարմնիկները) ծնունդ տուին պղպեղախտին, ընդ որս և մարմին վրայ երեւցած բիծերուն. բայց այս վերջինները այն տուին միայն երեւան եկան, երբ արդէն թրթուրներու աղիքները ամբողջովին վարակուած էին: Մարդկային ցեղի մէկ քանի հիւանդութեանց մէջ ալ այսպէս է. այսինքն թէ, մարմնային բարբառումները՝ աղիքներու խանգարումէն յառաջ եկած երեւոյթներ են:

Չատուած միւս թրթուրները մաքուր և անարատ տերեւներ ուտելով, ոչ մարմնիկներ ունէին իրենց արեան մէջ, և ոչ ալ բիծեր իրենց մարմին վրայ: Այս կերպով հաստատուեցաւ թէ, այդ սեւ բիծերը, թրթուրներու արեան մէջ մարմնիկներու գոյութենէն առաջ կուգան: Բայց չի մոռնանք ըսելու թէ, այդ սեւ բիծերը միշտ գեղնագոյն չըջանակի մը մէջ կը գտնուին, որ պէտք է շփոթել ուրիշ սեւ բիծերու հետ, որոնք յառաջ կուգան շատ անգամներ, երբ թրթուրները ճրմուելին, շփուին, կամ մէկզմէկու ստոթիկներէն վնասուին:

Հետեւեալ մէջ, մարմնիկներու շերտայինութիւնը. — Տարակոյս չի կոյ որ, ախտածէտ հոնտերէն յառաջ կուգան միշտ ախտավարակ թրթուրներ:

առար պէս ալ, երբ հոնտերը մարմնիկներէ վարակուած են, իրենցմէ ծնած թրթուրներն ալ այդ մարմնիկներէն վարակուած պիտի լըլան: Ահա այս պատճառաւ, Մ. Հանրի Մուսկի, իրաւունքով այս հիւանդութիւնը «հոնտերու հիւանդութիւն կոչեց, և բոլոր շերտմարոյծերու ուշադրութիւնը հրաւիրեց, որ պէս զի ջանան ըստ կարելոյն մարմնիկներէ զերծ հոնտեր պատրաստել:

Այս վարկածին վրայ հիմնուելով, Տօթթէօս Օզլմիս, որ նայեալս հաւկիթներուն մէջ մարմնիկներուն ներկայութիւնը գտնելով ուսումնասիրած է, ուրիշ վերջը Մ. Գաւրօ Վիթաֆինի, և վերջապէս Մ. Է. Գոռնալիս, որոնք՝ եւս լրջօրէն ուսումնասիրած են այս եզակի արտադրութիւնը, լաւ ճանչնալով շերտմը և իր բնական յատկութիւնները, խորհած էին հաւկիթները մանրադիտակով քննելով, հիւանդութիւնը բուժելու դրութիւն մը հաստատել: Այս խաղաղի գիտնականները այնպէս կ'ենթադրէին որ, մարմնիկը՝ հիւանդներու աւերումէն առաջ եկած արտադրութիւն մ'է, որ հաւկիթին, ինչպէս և թրթուրին և կծիծին արեան մէջ, ախտաբեր հանգամանք մը կ'ստանայ թէեւ, բայց բոլոր թրթուրներէն կենաց վախճանին մօտ, բնական և հաստատ գոյութիւն մ'է ան, այսինքն թէ, սեւէ թրթուրիկ, անպատճառ այդ մանրէներէն իր մարմնոյն մէջ կ'ունենայ մեռնելու մօտ: Այս սխալ ենթադրութենէն առաջնորդուելով, Մ. Վիթաֆինի և Մ. Գոռնալիս, իրենց ուսումնասիրութեանց հետեւութիւնը եղող դրութիւններ հրատարակեցին ապէկ և գէշ հոնտերը իրարմէ զանազանութեւ համար. և կ'ըսէին թէ, հոնտերու մէջ մարմնիկներու թիւը հետզհետէ կը շատնայ, որչափ անոնք բացուելու մօտենան, այսինքն թէ, լիթեոնիկը երբ հոնտերը կ'ոծէ, գրեթէ՝ ամբողջ իրենց մէջ խլատ աննշան քանակութեամբ մարմնիկներ կը պարունակեն. և երբ բացուելու օրերնին կը մօտենայ, այն տուին այդ մարմնիկներու թիւն ալ կը շատնայ. և այս պատճառաւ, մանրադիտակին քննութիւնը պէտք է կատարել ապրիլի սկիզբը, երբ հաւկիթները բացուելու մօտ են, և կամ մինչեւ իսկ նորածին թրթուրները ենթարկել քննութեան: Եւ կամ եթէ վերաբար և մարտ ամիսներուն մէջ կատարուի քննութիւնը, պէտք է նախապէս արուեստական

տաքութիւնով հասունցունել հաւկիթները: Թէեւ ճշմարիտ է որ, մարմնիկները հաւկիթներու հասունութեան հետ կ'աճին, կը բազմապատկին, որովհետեւ, այդ մարմնիկները իրենց սնունդը քաշելու համար, պէտք է որ, հունտերու մէջ պարունակուած գոյեղներուն բաղադրութիւնը. քիմիապէս փոխուի ինչ որ կը կատարուի բնականօրէն, երբ անոնց մէջի սաղմը յօրինուելու վիճակին մէջ ըլլայ. և այս պարագային՝ մարմնիկներու բազմապատկութիւնը այնչափ շատ կ'ըլլայ, որչափ սաղմնային աշխատութիւնը առաջ երթայ: Հասակնալու համար թէ, հունտերը վարակուած են թէ ոչ, մարմնիկներէ, պէտք է առնուապէն 50ի չափ հունտ քննել մանրադիտակով: Այս առթիւ կ'առնեն իւրաքանչիւր անգամին Յական հաւկիթ, կաթիլ մը ջուրի մէջ կը լեւտեն (ճզմել), կեղեւ և թաղանթ կը զատեն, և մնացեալը կը զննեն մանրադիտակով (մանրադիտակի գործածութեան վրայ վերջը պիտի խօսինք):

(Դժբաւեւի)

Ղ. ԲՈՒՍ

ԽՈՂԱՆՈՑԻ ԲԱԺԻՆԸ

ՍՄԻՌԻԿԻ ԽՃՈՂԱԿ (ԲԱԹԼԻՃԱՆ ՏՕԼՄԱՍԸ)

Սմիւրկներու կեղեւները բարակ մը ստիկեցէք, մէջտեղը ճեղքեցէք, առանց իրարմէ զատելու. յետոյ լուացէք և աղեցէք:

Դմակ կամ կարագ իւղի մէջ մի առ մի խորովեցէք, մինչեւ որ դեղինն, ոչ թէ կարմիրն, և իւղին մէջէն հանելով՝ զատ տեղ մը դրէք: Քիչ մը լոյիկի (տօմաթէս) ջուր, քիչ մ'ալ սոխ (անշուշտ պէտք եղածին չափ, որ «սողրած»ի պէս ջարդելու է), և առաջուց խորոված կտոր մը ծեծած միս (զըյմա) իւրար խառնելով, վերը յիշուած սմիւրկներու իւղին մէջ խորովեցէք, և համեմեցէք խիստ մանր ջարդուած ալպատքեղով: Աւելցուցէք այժմ պիստակ (Ֆըսթըք) և սղպեղ. այս ամէնը իւրար խառնեցէք, և սմեւկներու ճեղքուածքին մէջ լեցուցէք ու դրէք ամանի մը մէջ, ուսով մը ջրով քթքթացուցէք և հրամեցուցէք:

Այս խճողակը դդուսով ալ կարելի է ընել:

* *

ՄՍԱԽԱՌՆ ՃՄՈՒԳ (ՄԻԻՃՄԵՐԻ)

Երբեմն իրիկուընէ աւելցած միս կ'ոռնենաք, զորօրինակ, խաշածոյ (խաշումա) խորոված (զըզարթմա), անանի որ, խիստ քիչ ըլլալուն իբր կերակուր չէք կրնար սեղան դնել. ահաւասիկ դիւրին միջոց մը որ թէ խնայողական և թէ համով կերակուր մը կ'ունենաք անոնցմով:

Ունեցած մսերնուդ քանակութեան համեմատ, «բիլով» և սոխ աւելցուցէք. և ամէնը մէկէն սանդի մը մէջ դնելով այնքան ծեծեցէք որ խիստ (մաճուն) մը վերածուի: Պնակի մը մէջ քաշեցէք, և աւելցուցէք վրան 2—3 կամ աւելի հաւկիթ, քիչ մը աղստքեղ և աղ. աղէկ մը շաղուեցէք և վրան ծածկելով թողուցէք 1—2 ժամ: Յետոյ սապակի մը մէջ դմակ իւղ դրէք, և դգալով այդ խիստէն առնելով կարմրեցուցէք:

* *

ԴԵՏՆԱԽՆՁՈՐԻ ԿԼՈՐԻԿ

Առէք 12 հատ մեծ կակ, դեղին և սղիւրտ զետնախնձոր, ստիկեցէք, կարտեցէք և պաղ ջուրի մէջ լեցուցէք. լուացէք և սանի մը մէջ դնելով՝ քիչ մ'աղ ու ջուր աւելցուցէք և խաշեցէք, եփելուն պէս քամոցի (սիւսկէճ) մը մէջ լեցուցէք և թողէք որ ինքնին թորթորի (սիւզմիւշ ըլլալ). յետոյ մաղէ մ'անցուցէք և ամանի մը մէջ դրէք: Աւելցուցէք վրան կտոր մը կարագ, քիչ մը աղ, 6 հաւկիթի դեղնուց, ու փայտէ դգալով մը զարկէք, և թողուցէք քիչ մը. յետոյ աղիւրի մէջ կըրցուցէք, և թաթխեցէք անգլիական «պէտո սոս» կոչուած համեմունքին մէջ. (տես պատրաստութիւնը ի ստորեւ). ապա փոշիացած կալեթաի մէջ գլորեցէք և ախտի մը վրայ չարեցէք առանց ճմլելու:

Ճաշէն 10 վայրկեան առաջ կարագ կամ դմակ իւղի մէջ տոտկեցէք, մինչեւ որ բաց կարմիր գոյն մը ստանան:

* *

ՊԻՏՏ ՍՕՍԹԱՅԱՆ (ՍԱԼՅԱ)

Ամանի մը մէջ դրէք շերտ մը օթեկ (պալաթ) հացի փոր, 80 տրամ կաթ, սոխ մը (կեղեւած, առանց ջարդելու) պաղունց մը աղ, քանի մը հատ կուշտ պղպեղ, և տաշած կէս մշկընկոյզ, ասոնք ամենքը եփեցէք քանի մը վայրկեան, կրակէն վար առէք, և խիւրյն

քիչ մը կարող խառնեցէք, քամոցէ մ'ան-
ցուցէք ու գործածեցէք:

* * *

ԳՄԱԿՈՎ, ԳԵՏԵԱՆՆՁՈՐ

Ոչխորի դմակը մանր քառակուսիներու
վերածեցէք, քիչ մը սղիւր ցանեցէք, և հա-
լած իւզի մէջ խորովեցէք. յետոյ արգանակ
(մաի ջուր) կամ քիչ մը ջուր լեցուցէք վրան,
աղ պղպեղ, պճեղ մը սխտոր, փնջիկ մը ա-
ղաաղեղ և զեղակարոս (ֆրէնկ մայրանոսը)
աւելցնելով վրան 5 վայրկեանի չափ եփեցէք:
Դրէք այժմ պատրաստուած դմակին համե-
մատ հում գետնախնձոր, որ պէտք է կե-
ղեւած և մանրուած ըլլայ: Լաւ կրակի մը
վրայ եփեցէք, և ապա կտրարիչը զոյցելով
փուռի մը մէջ եփեցէք (եթէ ունիք), կամ
թողուցէք կրակին վրայ մինչև որ եփի:

Տաք հրամցուցէք:

* * *

ԳԵՏԵԱՆՆՁՈՐԻ ԽՈՐՏԻԿ

Պէտք եղածին չափ գետնախնձոր առէք:
աղ ջուրի մէջ խառնեցէք, ցամքեցուցէք, և
տաք տաք կեղեւեցէք: Շերտ առ շերտ կտը-
տեցէք, և ամանի մը մէջ դրէք. աւելցուցէք
այժմ քիչ մը տաք ջուր, աղ, պղպեղ, և քիչ
մ'աղ ջարդուած աղաաղեղ: Վայրկեան մը
կրակի վրայ թողուցէք որ տապկուի, երբոր
կարծրանան քիչ մը լիմանի հիւթ կամ քաղախ
անցուցէք:

Այս կերակուրը պէտք է խիստ տաք սե-
ղան դնել:

ՏԱՆՏԻԿԻՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Խաչի տօնին առթիւ Արմաշ գա-
ցող ուխտաւորները պիտի կրնան առանց
անցադիրի ուղեւորիչ մի միայն ցոյց տա-
լով իրենց «Համիրիէ թէղքէրէ»-ին:

— Նիկոմիդիայէն եկած պաշտօնա-
կան աւելեկութեանց համեմատ Գուրա-
Պէլէնի կրօնափոխութեան շարժումը դադ-
րած է, որովհետեւ ժողովրդի գանդաու-
ներուն զոհացում արուած է:

— Ռէթէոս էֆ. Պէրպէրեան մայրա-

քաղաքս հասաւ Զուլիցերիայէն, անձամբ
ստանձնելու համար իր վարժարանին
աւսչութիւնը:

— Սամաթիայէն հետեւեալը կը գրեն
մեզ, զոր անկողնակալութեամբ կը հրա-
տարակենք. «Թաղիս Աղքատախնամին
պատուարժան անդամներուն հագածու և
անձնուէր աշխատութիւնները գնահա-
տելի են, նոյնպէս Աղն. Տօք. Իշլէմէ-
ճեան էֆ. ի ջանքերը, որոնք մեծապէս
երախտապարտ կը կացուցանեն ժողո-
վուրդը, սակայն ցու է ըսել թէ Աղքա-
տախնամի գեղադիրները պատրաստող
գեղադորժին բռնած վարմունքը ամե-
նուն զժգոհութիւն կը պատճառէ իրա-
ւամբ: Աղքատ հիւանդները ժամերով կը
սպասեն որպէսզի իրենց դեղը շինուի, ու
չատ անգամ կ'երթան կուգան, սակայն
ի զմէր, որով խեղճերը չի հանդուրժե-
լով այս անգութ ընթացքին՝ ճարահա-
տած՝ դրամ հայթայթելով օտար գեղա-
րանի մը կը գիմեն: Ուստի կը խնդրենք
Աղքատախնամի Ատենապետ էֆ. էն, որ
աղնիւ ու կարող անձ մըն է, հաճի վերջ
տալ այս ղեղձումներուն, որոնց երեւոյն
թաղին աղքատները կը մնասուն յանի-
րաւի:»

— Ս. Պատրիարք Հայրը ընկերակ-
ցութեամբ Ա. Գործակաւաար Տ. Ներ-
սէսեան էֆ. ի երկուշաբթի Կայս. Պա-
լատ գնաց, և առաջին քարտուղար Թաճ-
սին պէյի հետ տեսակցութիւն մը ունե-
ցաւ:

— Բաբելդէ Պատրիարքարան հասած
հեռագիր մը կ'ըսէ թէ՝ մանչ և աղջիկ
որբեր ճամբայ հանուած են Պոլիս գա-
լու համար:

— Շնորհակալութեամբ ստացանք
Տօքթ. Տաղաւարեան էֆ. ի մէկ նոր աշ-
խատասիրութիւնը «Առանին Առողջապա-
հութիւն» անունով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բերայի Սանդա-Մարիա եկեղեցիին մէջ հոգեհանդստեան պաշտօն կատարողեցաւ Էլիզապէթ կայսրուհիին հոգան համար: Ներկայ էին բոլոր գեապանները, Կայս. կառավարութեան կողմէ հանքերու և անտառներու նախարար Մէլհամէ փաշա, օտարազգի և հայ անձնաւորութիւններ, հասարակութեանց հագեւոր պետերը. մեր Պատրիարքարանին ներկայացուցիչն էր Երէցեան եպիսկոպոս երջաւ փարգապետներով: Արարողութենէն յետոյ ներկաները փութացին իրենց ցաւակցութիւնը յայտնել գեապան Պ. Քալիչէի:

— Պետ. Խորհուրդը որոշեց շոր կշիռներուն տեղ հինները գործածել, իսկ էնտազէի, արշնի տեղ մէթրօ գործածել. հակառակ վարուողները առգանքի պիտի դատապարտուին:

— Պոլիս Ալթը-Մէրմէր հրդեհ ծագելով 50ի չափ տուն այրեցան, փողոցները նեղ և տունները փայտաշէն ըլլալուն հրդեհը իսկոյն ծաւալեցաւ. հըրկիզեալները մեծ մասամբ աղքատ են, որոնց հաց բաշխեց թաղապետութիւնը:

— Թրամուէյի ընկերութիւնը յանձն կառնէ նորանոր գիծեր շինել մայրաքաղաքիս այլեւայլ կողմերը, նայնպէս միացնել Պոլսի և Ալաթիայի գիծերը. ընկերութիւնը կառաջարկէ պայմանաժամը 75 տարի երկարել:

— «Իզտամ» ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ հացին գինը իջեցնելու մասին: Քաղաքապետութեան մէջ յանձնաժողով մը կազմուած է այս նպատակով:

— Կիրակի գիշեր Պահէ-Գարու Մարտառան դրան մօտ հրդեհ ծագելով երեք խանութ այրեցան:

— Հելլեն հիւպատոսարանը իր հպատակներուն ծանուց թէ՝ Ոսմ. կառավարութիւնը արդիւրած է արմուիքի արտածումը ճշտորայէ:

— Վեհ. Սուլթանը ի վարձատրութիւն բարւոր ծառայութիւններու 5000 սակի շնորհեց Յունական պատերազմին հրամանատար Լահէմ փաշային և զօրաբաժնի միւս հրամանատարներուն 1250 սակին և 1000 սակին սակի:

— Ա. կարգի մէծիալէի պատուանդան արուեստ Պետ. Խորհուրդի անդամ Չայեան Էլիաս Էֆ.ի:

— Սեպտ. 5էն 6ի գիշերը երկրաշարժի բաւն ցնցումներ զգացուեր են Սելանիկի մէջ:

— Մախսուսէի վարչութիւնը որոշեց իր երթեւեկութիւնները ալ տեղի կոնսուլներէ: Տրադիցոնի համար այսուհետեւ երկու թղթատար պիտի յատկացուին, մին ամէն նաւահանգիստ պիտի հանդիպի, միւսը՝ Սամսոն, Կիրասոն և Տրապիզոն միայն:

— Երեքշաբթի օր կատարուեցաւ Պալթի նարաշէն Պալկարական եկեղեցիին օծման հանդէսը: Ներկայ էին Պալկարիայէն եկած բազմաթիւ կղերական ու աշխարհական անձնաւորութիւններ:

— Այս տարի հունձրերը Կիպրոսի մէջ թէ առտա են և թէ լաւ տեսակէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԷԼԻՉԱՊԵԹ ԿԱՅՄԱՐՈՒՀԻՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ. — Սեպտ. 5ի շարաթօրը կատարուեցաւ Աւստրիայ կայսրուհիին յուզարկատրութեան հանդէսը. առաւելնէ սկսեալ քաղքին փողոցները խառն բազմութիւն մը լեցուած էր, շէնքերուն վրայ կէս պարզուած դրօշներ կը տեսնուէին ու պատշգամները սեւերով ծածկուած էին. քաղաքը առգի երեւոյթ մը առած էր: Կէս օրէն չորս ժամ յետոյ եկեղեցիներու զանգակները սկսան հնչել, և թափօրը դուրս ելաւ Հօֆպուրկի պալատէն. կարգը պալատին մէջ կատարուեցաւ. մեռելակառքին առջեւ

ւէն կերթային պարտատկան երկու պաշ-
նօնատար, երկու կղերական, պալատին
երէցը, աջ և ձախ կողմէն պարտատկան
զինուորներ: Գաղաղին կը հետեւէին կայս-
րուհիին հետեւորդները սեւեր հագած:
Յուզարկաւորութեան արարողութիւնը
կատարուեցաւ Քարուչիններու եկեղե-
ցիին մէջ, ուր փառաւոր մահաբեմի մը
վրայ գրուեցաւ գաղաղը: Ներկայ էին
օտար վեհապետներ, ներկայացուցիչ-
ներ, զինուորական ու քաղաքական բարձ-
րաստիճան պաշտօնատարներ: Գաղաղը
ծաղկեփունջերու և պսակներու միջեւ
կրտսած էր: Գաղաղը ամփոփուեցաւ
եկեղեցիին զեմնադամբանը: Օտար վե-
հապետները սրնոց մէջ կային Գերմանիոյ
կայսրը, Ռումանիոյ, Սերպիոյ թագա-
ւորները, Իտալիոյ գահաժառանգը ան-
ձամբ գացին ցառակցութիւն յայտնել
Ֆրանց-Եօզէֆ կայսեր: Բաղմաթիւ ցա-
ռակցական հեռագիրներ կ'ուղղուին կայ-
սեր:

ՏԲԷՅՖԻԻՍԻ ԽՆԴԻՐԸ. — Նախարար-
ներու գումարման մէջ գատտական նախա-
րարը յայտարարեց թէ՛ գատին վերա-
բընտարութիւնը օրէնքի հակառակ չէ, բայց
գտար վերաբնեւէ առաջ յանձնաժողով
մը պէտք է կազմուի խորհրդակցելու այս
մասին, նախարարութիւնը իր հաւա-
նութիւնը տալով յանձնաժողովը կազ-
մուեցաւ, որ տասը օրէն պիտի աւար-
տէ իր աշխատութիւնները: Պ. Զիւրլէն-
տէն հրաժարականը խրկեց նախարարա-
պետին ըսելով թէ՛ ինք համազուած է
Տրէյֆիւսի յանցապարտութեան. նախա-
րարական տաղնապ մը մտադրուա կը հա-
մարուի: Պատերազմական նախարար ան-
նուանեցաւ Պ. Շանուան: Էսթէրհայի տ-
ներեւութացի է, բայց չզիտցաւ իր ուր
երթալը: անձնապահ ըլլալու լուրերը
անհիմն են բարբառին: Որլէանի գաւթը
յայտարարութիւն մը հրատարակեց ու-
րուն մէջ կ'ըսէ թէ՛ Տրէյֆիւսի պէս մատ-
նիչ մը անմեղ հանել կ'ուզուի, դուքոր
կ'աւելցնէ թէ՛ ասիկա պարզապէս հայ-

րենիքին գէմ գաւաղբութիւն մըն է:

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՄԻՔՅԵՍՈՒ ՆԱՀԱՆԳՆԵՐ. —
Ամերիկեան կառավարութիւնը մտադիր
է մի միայն Փիլիպեանց Լուծոն կղզին
գրաւել, Արչիպելագոսին միւս կղզիները
Սպանիոյ պիտի դարձուն, սրայմանով
որ կառավարութեան ձեւը յառաջդի-
մական ըլլայ: Հաշտութեան վերջնական
կնքման բանակցութիւնները հոկտ. 1ին
պիտի սկսին Բարիդ: Հրամանագիր մը
հրատարակուեցաւ, որով կը գաղբին
խորհրդարանին նիստերը: Կըսուի թէ՛
Ամերիկեան կառավարութիւնը կը պատ-
րաստուի նոր զօրախումբ մը խրկել Փի-
լիպեանները:

ԱՄԻՏՄԱՆ. — Օմաուրմանի պարտու-
թեւէն յետոյ Բիչընըր փաշա լուր առաւ
թէ՛ սպիտակամորթ զինուորներ գրտած
են Ֆաշօտան, որ Խարթումէն քանի մը
քիլոմէթր հեռու է: Եզիպտական մար-
տանաւեր գացին դրտուել Ֆաշօտան: Կը
կարծուի թէ՛ այդ սպիտակամորթ զօր-
քերը Ֆրանսացի են, որով Եզիպտական
գրտուումէն կրնայ խնդիր ծագիլ Ֆրան-
սայի և Անգլիոյ միջեւ: Բիչընըր փաշա
Լոնտոնէ հրահանգ ստացած է Եզիպտա-
կան իրաւունքը պաշտպանել ու ամէն
կերպ բռնուն միջոցներով վանել Ֆաշօ-
տան գրտուող զինուորները:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Խ Ն Գ Ի Ր Ն Ե Ր

Ժ. Գ.

Աշտարակին գաղաթէն քար մը փըր-
թաւ, բարին գետին իյնալու համար
վերջին երկվայրկեանին կարած ճամբան
միջոցին կէսն էր. Թրչափ է աշտարակին
բարձրութիւնը:

Տ. ՊՕՋԱՃԵԱՆ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ԻԶՄԻՐ. — Կ. Մալէճանեան էֆ. — Ստացած ենք «Բիւզանդին» ի խմբագրատունէն Ձեր զրկած աւանդը. — պակաս թերթերը ղրկուեցան. յայց տուած նոր բաժանորդնիդ արձանագրեցինք. կատարելապէս վստահ եղիք թէ թերթը պիտի յարատեւէ, և հետզհետէ ալ աւելի ճոխ և օգտակար պարունակութիւններով:

ԻԶՄԻՏ. — Մ. Ն. Միքայէլեան էֆ. — Ձեր ալ ստակաները ղրկուեցան: Ցարդ ուղղած հարցումներնուդ պատասխանուած է արդէն մեծ մասին, մնացեալներուն ալ հետզհետէ կը պատասխանուի. ուրախ ենք որ Ձեր հարցումները միշտ օգտակար խնդիրներու շուրջը կը դառնան, միայն թէ, թերթիս ծաւալը փոքր ըլլալուն, կարելի չէ մէկ անգամուն երկար յօդուածները զետեղել. ապագային երբ ընդարձակենք, այն ատեն, այդ տեսակ պատասխանները կարելի կ'ըլլայ մէկ անգամէն, և հետզհետէ գրել. առ այժմ սկստք է այս չափով գոհանաք, որպէս զի ուրիշ բաժանորդներու հարցմանց ալ տեղ մնայ:

ԳՈՒՄ-ԳԱՅՈՒ. — Յ. Կ. Սաթմեան էֆ. — Մօտաւորապէս պիտի պատասխանենք. առ այժմ սաչափ դիտելիք որ, Ձեր զրկած վարդետունկի ճիւղին վրայ գտնուած ճերմակ թելերը հիւանդութեան մը պատճառ կ'ամ արդիւնք չեն: Անոնց տակ աեսակ մը ճանճի հաւկիթները կան ծածկուած, և այս վերջիններէն շատերն ալ արդէն ուղեղած, ճիւղին կեղեւը կերած եւ հեռացած են, մնացածներն ալ չորցած են:

Դարմանը կը սովորեցնենք թերթիս մէջ գրելով:

ԻԶՄԻՏ. — Ա. Կ. Կտաւճեան էֆ. — Ձեր ալ պակաս թիւերը ղրկեցինք, ինչպէս եւ մասնաւոր նամակ:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ն. Փափազեան էֆ. — Ղրկուեցան:

Սամսոն. — Ս. Գամպէրեան էֆ. — Ղըրկուեցան Սամսոն Ձեր նոր հասցէին. միշտ հօտ պիտի ղրկուին այսուհետեւ:

ԵՐԶԵՎԱ. — Յ. Յ. Յովհաննէսեան էֆ. — Ամբողջովին ղրկեցինք. կուզէ՞ք որ շարունակուի:

ՄԱԼԿԱՐԱ. — Վ. Մ. Զօլաքեան էֆ. —

Նամակ գրուեցաւ. պակասներուն վրայ ընդհուպ տեղեկութիւն տուէք:

ՌՈՏՈՍԹՕ. — Լեւոն Ս. Պալքեճեան էֆ. — Տեղւոյդ համար անշուշտ նոր կարգադրութիւն մը պիտի ընենք. ստակաները կ'ընդունիք. հաճեցէք միւս բաժանորդաց ալ խնայեցէք:

ՌՈՏՈՍԹՕ. — Մ. Կ. Մալաքեան էֆ. — Ձեր պատասխանին կ'պատենք:

ՊԱՐՏԻԶԱԿ. — Ս. Մակարեան էֆ. — Կ'ընդունինք, բայց հաճեցէք եթէ կարելի է, գործակալութեան խնդիրը կարգադրել:

ՌՈՏՈՍԹՕ. — Յ. Տէմիրեան էֆ. — Կրնաք ուղղակի թղթատուն յանձնել ծախքերը զեղջիւղով:

ԴԱԻՐԻԺ. — Լուարանական ընկ. — Ստացած ենք նամակնիդ կը շարունակենք ղրկել:

ԿԻՐԱՍՈՆ. — Կ. Գ. Սէֆերեան. — Ստացած ենք շնորհակալութեամբ, պիտի ղրկենք այսուհետեւ Ձեր նոր հասցէին:


ՏՐԱՊԻԶՈՆ. — Հ. Խ. Վ. Պէհրիկեան. — Ստացանք նամակնիդ շնորհակալութիւն:

ՎՐԻՊԱԿ

Նախորդ շարթուան թղթակցութեանց շարքին մէջ անգղուլութեամբ հետեւալ պարբերութիւնը մոռցուած էր:

Երկրորդ սինակին Ծրդ տողէն սկսեալ, որ պէտք է հետեւեալ կերպով կարդալ:

Եւ այն պարագային որ, հարցում մը մեր ծրագրի սահմաններէն դուրս կը գտնուի, աւոր սլատասխանելու համար պիտի դիմենք մասնագէտներու: Եւրոպայի մէջ մասնաւոր գործակալութիւններ կան, այս նպատակաւ հաստատուած, որոնք կ'ըրազին մասնաւոր վճարումներու փոխարէն, ռեւէ արհեստի վերաբերեալ հնարքներու համար, առնուած հին ու նոր արտօնագրերու (իմթիյազ) պատճէներն ղրկել այն ամեն անձանց, որոնք կը փափաքին անոնց վրայ գաղափար կաղմել:



Կը խնդրուի «Հանրագիտակ» Պատ. Գործակալութիւններէն, որ բարեհաճին, իրենց քով գտնուած աւելորդ հին թերթերը մեզ վերադարձնել:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԱՌՏՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ՏՕԳԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ

Լիակատար աշխատասիրութիւն

Յանձնարարեալ և գրուածեալ յ'ուսմ.
Խորհրդոյ: Կարեւոր գիւրք ամէն անձի
համար, կը գտնուի ամէն գրալաճառաց
քով:

ԳԻՆ 25 ՂՐՇ.

ՀԱՃՈՅՔ ՄԸ

ՈՐ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԷ

Ճշմարտ հաճոյքն այն է որ, ախորժեկի ժա-
մանց մը ընծայելով հանդերձ, առողջութեան
ալ մեծապէս կ'օգնէ: Ներկայ դարուս մէջ հա-
ճոյքի նիւթերը բազմաթիւ են. սակայն զար-
գացած ազգեր ամենէն աւելի թիջօրն նա-
խադատութիւն կուտան, անոր համար որ,
այս թանկագին ըմպելիին ամենածանր յոգ-
նութիւնները շուտով կ'անցնէ և նոր կորով
կը ներշնչէ, մարդուս ձգած աշխատութիւնը
վերսկսելու: Ձմեռը արիւնը տաքցնելով, մար-
մինը ցուրտին դէմ կը պաշտպանէ՝ տմառն
ալ զովութիւն ընծայելով, շատ մը հիւան-
դութեանց առաջը կ'առնէ: Խնամով պատ-
րաստուած դաւաթ մը թէյը, նոյնչափ մա-
լուրի հաւասար սնունդ կը պարունակէ և իր
անբաղդատելի աթնութեամբ կատարեալ նա-
խախնամութիւն սընէ մարդկութեան համար:
Սակայն աւանդ որ թիջօ մոնուածի ծախուած-
ներու մեծապէս մասը խարդախուած ըլլա-
լով, զուրկ են այս տաւալութիւններէն և զա-
նոնք ճանչնալն շատ դժուար է, ուստի անոնք
որ կը վաճառեն ԸՆՏԻՐ, ԱՆԽԱՐԴԱՆ և միւ-
նոյն ատեն ԱՅԱՆ ԹԵՅ ԽՈՒՆ, պէտք է Կ.
ԵՍՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿԵՐՑ
թէյերը գործածեն. ուշադրութեամբ փնտը-
ռելով անոնց անունն ու մասնաճիւղը տուրի-
բու վրայ: Որովհետեւ թէյի այս մեծ վաճա-
ռատուն, իւր երկարամեայ փորձառութեամբ,
արեւելեան երկիրներէ մեծաքանակ թէյ որ-
տածելուն և ահագին սպառանքներ սպասելուն

չնորհիւ, միշտ անխաբար թէյ կը ծախէ
ԱՆՏՐՑԵԼԻ գիներով: Ընկերութեան Կեդրո-
նատեղին է Կ. Պօլիս, Ճէլալ Պէյ Խան, Թիւ 10:

ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԵՒ ԼԵՋՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ, ԲԱՆԿԱԼԹԻ

Սոյն վարժարանի նպատակն է՝ վաճառա-
կանութիւն և Լեզու սորվեցնել աշակերտաց:
Վարժարանս ունի 3 դասընթացք՝ մանկա-
սարսէզ, նախակրթարան և ուսումնարան:

«Մանկապարտէզ»ի մէջ Զրէօպէլեան դը-
րութեամբ մանուկներուն կ'ուսուցուն Հայ.
և Ֆրանսերէն լեզուաց և ուսմանց զանազան
ճիւղերուն և բարեկրթութեան տարերքը:

Մանկապարտէզի նշանարանն է «Խաղե-
րով սովորիլ, սովորելով գրօսուիլ»:

«Նախակրթարանի»ի մէջ Հայ. Օսմ. և
Ֆրանսերէն լեզուաց վրայ ամէն օր դաս կը
ուրուի աշակերտաց պատանեկան յարմար ուս-
մանք ու դիտութիւն կը մշակեն աշակեր-
տաց միտքը, անոնց սիրտն ու հոգին ազնը-
ւութեամբ դաստիարակելով:

Նախակրթարանի նշանարանն է «Զուար-
թութեամբ աշխատիլ, հաճոյքով ուսանիլ»:

«Ուսումնարանի»ի մէջ Անգլ. Գերմ. Ի-
տալ և Յունարէն լեզուաց վրայ ամէն օր
դասեր պիտի աւանդուին այնպիսի եղանա-
կաւ որ երբեք չեն շփոթուիր և 3 տարին
միայն բաւական կ'ըլլայ զանոնք ձեռք բերե-
լու:

«Ուսումնարան»ի նշանարանն է. «Լրջու-
թեամբ հետեւիլ, կանոնաւորութեամբ ու-
սումնասիրել»:

Աշակերտք առ հասարակ ընտանեկան խը-
նամբ կը վայելեն Տիկին Ալաւնի Յ. Բագրա-
տունիի հոգածութեան ներքեւ:

Իրենց օրդին լեզուագէտ ու վաճառական
ընելու վաճառքով ծնողք կրնան դիմել վար-
ժարան ամէն օր:

Հիմնադիր. Տնօրէն
ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ

Կը խնդրուի թերթիս հետ առնչութիւն ունեցող ամեն անձերէ (գործակալ, բաժանորդ, ևն.) որ բարեհաճին իրենց թղթակցութիւնները ուղղել հետեւեալ հասցէին, ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇ ՈՒ ԵՒ Է ՄԻՋՆՈՐԴԻ. հակառակ պարագային, եթէ անպատեհութիւններ տեղի ունենան, ամեն դանգառ անլսելի մնալով, պատասխանատու չենք ըլլար:

درعليه ده بافچه قوسنده اسكي ضبطيه ده
صوباجي پارسغ افدينك ۱۹ نومرولى دكاننده
«مجموعه علوم» غزنه سى سر محررى (بولاد) افدى به

Հ. Բոլատ Տնօրէն-Խմբագրապետ
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ»

19. Էսկի-Չապթիյէ, Պաղչէ-Գափու
Սթամպուլ

H. Polad Rédacteur en chef du journal
"HANKAKIDAK,"
Chez M. Parsegh Hazarossian
19. Rue Eski-Zabtié Bahdjé. Kapou. 19
Stamboû

ՄԵՐ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՈՐԷՑ

Լ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՒ Ս. ԷՄԻՐՉԷ

Կ. ՊՈԼԻՍ ՖԵՏԷԼԵԱՆ ԽԱՆԻ ՏԱԿ ԹԻԻ 3

Սոյն վաճառատուն պատրաստ է մատակարարել մեծ ու փոքր քանակութեամբ՝ ամեն տեսակ թարմ դեղորայք. վերաբուժական գործիքներ, Անգղիական և Գաղղ. պատրաստ դեղեր, դօնեակներ, գինիներ և հանքային ջուրերու մեծ մթերք մը, յարմար գներով: Լ. Արսլան-եան և Ս. Էմիրչէ Ընկերութիւնը երկարատեւ անձնական փորձառութիւններ ունին: Ամեն ջանք և աշխատութիւն չեն խնայեր իրենց յաճախորդներն գոհացրելու համար, մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք գաւառաց համար, որոնց կը զրկեն դեղորայք, ամենայն արագութեամբ, թարմ և մատչելի գներով:

ԳՈՐԾԱԿԱԼՔ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ

Այնթապ — Գարեգին էֆ. Պողարեան
Ասա-բազար — Ստեփան էֆ. Սափրիչեան
Աւաբկիր — Գ. Տէվէճեան էֆ.
Գուրս-Պէլէն Արժ. Տ. Ստեփան քահանայ
Մկրեան
Էրզնում — Եֆ. էֆ. Տ. Ազարեան
Թեհրան — Կարապետ էֆ. Բաբարեան
Իզմիր — Կարապետ էֆ. Մալէճեանեան
Իզմիս — Աբրահամ էֆ. Կ. Կոստանեան
Մալկարա — Վ. Մանուկ էֆ. Չօլաքեան
Խարբերդ — Խոսրով էֆ. Քէչիլեան

Կելիպօլու — Յովսէփ էֆ. Տէր-Յովսէփեան
Կիրատն. — Արմենուկ էֆ. Սօմունճեան
Մարաշ — Արժ. Տ. Յովհաննէս քահանայ
Վարժապետեան
Մանչեսթր. — Յակոբ էֆ. Բոլատեան
Մուշ. — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան
Պանսքումա. — Արմենուկ էֆ. Ս. Մսերեան
Պարսիզակ. — Վահան էֆ. Ճիկունի
Պրուսա. — Օննիկ էֆ. Լուիթեան
Սաւսոն. — Կարապետ էֆ. Սէֆերեան
Սրվազ. — Յ. էֆ. Գարակէօղեան
Տրապզոն. — Սահակ էֆ. Էթմէճեան

Հանրագիտակ կը ծախուի ամեն լրագրավաճառաց քով, մասնաւորաբար

Մաղրի-Գիւղ, Պօղոս էֆ. Ազնաւորեանի խանութը:
Դատը-Գիւղ, Լեւոն էֆ. Չպուրճեան Դեղարանը:
Բերա, Մեծ փողոց Կառնիկ էֆ. Կիւլէրեանի խանութը: